ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԿԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1951—1955)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՋԻՆՅԱՆ

ՍՄԿԿ պատմության բոլոր փուլերում կարևորագույն խնդիր է եղել և մնում է մարքսիզմ-լենինիզմի դասականների տեսական ժառանգության հիման վրա հասարակական գիտությունների զարգացումը։ Ինչպես նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումում, «ՍՄԿԿ-ն առաջնահերթ նշանակություն է տալիս Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի գաղափարական ժառանգության ուսումնասիրմանը»[1]։ Ղեկավարվելով մարքս-լենինյան տեսությամբ, կուսակցությունը հաջողությամբ իրականացնում է կոմունիստական հասարակարգի կառուցման խնդիրները։ ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումը դրեց այն խնդիրը, որ «հասարակական գիտությունները անշեղորեն առաջնորդվեն հեղափոխական տեսությամբ, հմտորեն կիրառեն գիտական որոնման մարքս-լենինյան փորձված մեթոդաբանությունը»[2]։

Հասարակական գիտությունների զարգացման ղեկավարման ուղղությամբ Հայաստանում կոմկուսը 1950-ական թվականներին նկատելի փորձ է կուտակել։ Եռապատերազմյան ժամանակաշրջանում կուսակցությունը գաղափարախոսական աշխատանքի հիմքում դրեց մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունների հայերեն հրատարակման և ուսումնասիրման, հասարակական գիտությունների զարգացման, դրանց դասավանդման բարելավման հարցերը։ ՀԿԿ Կենտկոմը, քաղկոմ-շրջկոմները և սկզբնական կուսակցական կազմակերպությունները գաղափարախոսական աշխատողների և հասարակագետների ուժերը նպատակամղեցին գաղափարաքաղաքական աշխատանքի հետագա բարելավմանը, տեսական հարցերի ըստ ամենայնի ուսումնասիրմանը, դրանք աշխատավորների կոմունիստական դաստիարակությանը ծառայեցնելու գործին։

Դեռևս 1947 թ. դեկտեմբերին քննարկելով «Հայաստանի կուսակցական կազմակերպություններում գաղափարական աշխատանքը ուժեղացնելու միջոցառումների մասին» հարցը, ՀԿԿ Կենտկոմի պլենումը հասարակագետներից պահանջեց մարքս-լենինյան տեսության զարգացման հիման վրա մշակել և գիտականորեն լուսաբանել մարքսիստական փիլիսոփայության և քաղաքատնտեսության, սովետական ժամանակաշրջանի պատմության հարցերը[3]։

ՀԿԿ Կենտկոմի որոշումների լույսի ներքո կուսակցության քաղկոմ-շրջկոմները և սկզբնական կուսակցական կազմակերպությունները համապատասխան միջոցառումներ իրականացրին։ 1951 թ. սեպտեմբերին ՀԿԿ Երևանի քաղկոմի բյուրոն Հայպետհրատի առջև խնդիր դրեց ակտիվացնել մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունների հրատարակման ուղղությամբ կատարվող աշխատանքը։ Ձեռնարկված միջոցառումները դրական արդյունք տվեցին։ ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը 1952 թ. ավարտեց Վ. Ի. Լենինի 35 հատորյակի հայերեն թարգմանությունը[4], հնգամյակի ընթացքում լույս ընծայվեցին նաև Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի 34 աշխատություններ՝ 205 հազար ընդհանուր տպաքանակով[5], հրատարակվեցին նաև Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և հայ մյուս մարքսիստ հեղափո-

---

1 «Սովետական Հայաստան», 15. VI. 1983։

2 Նույն տեղում։

3 «Կուսակցական կյանք», 1947, № 7, էջ 35։

4 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 33, ց. 22, գ. 595, թ. 13։

5 «Կուսակցական կյանք», 1956, № 1, էջ 24։

խականների աշխատությունները, ինչպես նաև մեծաքանակ քաղաքական գրականություն։

Մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունների և քաղաքական գրականության հրատարակմանը զուգընթաց զգալի աշխատանք կատարվեց հասարակական գիտությունների զարգացման ուղղությամբ։ 5-րդ հնգամյակի տարիներին Հայաստանի կոմկուսը կարևոր ուշադրություն դարձրեց գաղափարախոսական աշխատանքի զինանոցի հարստացմանը, մարքսիստական փիլիսոփայության, քաղաքատնտեսության, գիտական կոմունիզմի, կուսակցության պատմության պրոբլեմների մշակմանը, կյանքի հետ դրանց կապի հետագա ամրապնդմանը։ Այդ բնագավառում կարևոր դեր խաղաց 1954 թ. հունվարին հրավիրված Հայաստանի կոմկուսի XVII համագումարը, որը հասարակագետների առջև խնդիր դրեց ապահովել լիարժեք գիտական աշխատությունների ստեղծումը՝ նվիրված դասակարգային պայքարին և ազատագրական շարժմանը, պատմության մեջ աշխատավոր մասսաների խաղացած դերին, Հայաստանի պատմության սովետական ժամանակաշրջանի հարցերին։ Պահանջվեց ավելի լայնորեն ծավալել ռուս-հայկական քաղաքական և կուլտուրական կապերի պատմության, Ռուսաստանի հետ Հայաստանի միացման առաջադիմական նշանակության և հայ ժողովրդի ճակատագրի հարցում Ռուսաստանի վճռական դերի ուսումնասիրման ուղղությամբ կատարվող աշխատանքը[6]։

ՀԿԿ XVII համագումարի և Կենտկոմի ընդունած որոշումների լույսի ներքո ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում և հանրապետության բուհերի հասարակագիտական ամբիոններում ակտիվացավ սովետական ժամանակաշրջանի պրոբլեմների ուսումնասիրումը, ուժեղացավ դաշնակցական գաղափարախոսության դեմ մղվող պայքարը[7]։ Միայն Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը 1953 թ. և 1954 թ. 10 ամսում այդ թեմատիկայով լույս ընծայեց 39 անուն աշխատություն՝ 427 մամուլ ծավալով[8]։ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքը հեղափոխական, հասարակական-քաղաքական շարժումների, տեսական, փիլիսոփայական և տնտեսագիտական հարցերի, ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և հայ ժողովրդի պատմության պրոբլեմների վերաբերյալ 1954 թ. հրատարակեց 34, իսկ 1955 թ. 11 ամսում՝ 48 աշխատություն։

Կուսակազմակերպությունների մշտական ղեկավարության և օգնության պայմաններում հասարակագետ գիտնականները հետազոտություններ կատարեցին մարքս-լենինյան փիլիսոփայության, կուսակցության պատմության և տնտեսագիտության բնագավառում, մշակեցին և լուսաբանեցին սոցիալիստական շինարարության բազմաթիվ հրատապ պրոբլեմներ։

Այդ ժամանակաշրջանում կարևոր տեղ հատկացվեց հասարակագիտական թեմաներով գիտական սեսիաների կազմակերպմանը, սեսիաներ, որոնք նպաստեցին հասարակական գիտությունների նվաճումների և գիտական աշխատանքի ընդհանրացմանը, երիտասարդ գիտնականների գաղափարաքաղաքական աճին։ Լենինյան «Իսկրայի» լույս ընծայման, ՌՍԴԲԿ II համագումարի, ՌՍԴԲԿ կովկասյան միության հիմնադրման 50-ամյակներին, Ստ. Շահումյանի ծննդյան 75, Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակին նվիրված գիտական սեսիաներ կազմակերպվեցին մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում, գիտությունների ակադեմիայում և բուհերում։ Համատեղ գիտական սեսիաներ կազմակերպվեցին նաև եղբայրական հանրապետությունների և բուհական կազմակերպությունների կողմից։ Այսպես, 1954 թ. մարտ-ապրիլին Բաքվում գումարվեց ՍՍՀՄ գիտությունների

---

6 «Հաշվետու զեկուցում ՀԿԿ 17-րդ համագումարին ՀԿԿ Կենտկոմի աշխատանքի մասին», Երևան, 1954, էջ 33։

7 Մի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 83, գ. 13, թ. 179։

8 Նույն տեղում, ֆ. 88, ց. 17, գ. 36, թ. 17։

ակադեմիայի և անդրկովկասյան հանրապետությունների գիտությունների ակադեմիաների հասարակագիտական բաժանմունքների մասնաճյուղերի համատեղ նիստ, որը քննարկեց ՍՄԿԿ Կենտկոմի փետրվարյան (1954 թ.) պլենումի որոշումները, Անդրկովկասի սոցիալիստական ազգերի ձևավորման ու զարգացման, Ռուսաստանին Անդրկովկասի ժողովուրդների միանալու առաջադիմական նշանակության, այդ ժողովուրդների հասարակական մտքի վրա Ռուսաստանի XIX դ. առաջավոր մտքի ազդեցության հարցերը[9]։

Մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունների, քաղաքական, հասարակագիտական գրականության հրատարակումը և գիտական սեսիաների մշտական կազմակերպումը մեծապես նպաստեցին հանրապետությունում հասարակական գիտությունների զարգացմանը, գաղափարական կադրերի կոփմանը, հասարակական գիտությունների դասավանդման բարելավմանը։

Հասարակական գիտությունների դասավանդման բարելավման հարցը ՀԿԿ Կենտկոմը դրեց քաղկոմ-շրջկոմների և կուսկազմակերպությունների ուշադրության կենտրոնում։ 1951 թ. օգոստոսին ՍՄԿԿ Կենտկոմը որոշում ընդունեց «Բուհերում հասարակական գիտությունների դասավանդման դրվածքի բարելավման մասին», որի լույսի ներքո ՀԿԿ Կենտկոմի պլենումը 1951 թ. նոյեմբերին լսեց Երևանի պետական համալսարանի ռեկտորի և գյուղատնտեսական ինստիտուտի դիրեկտորի հաշվետվությունները[10]։ Պլենումը խնդիր դրեց բարձրացնել դասախոսական կադրերի գաղափարաքաղաքական մակարդակը, ուժեղացնել տեսության կապը պրակտիկայի հետ, այն նպատակամղել ուսանողների հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը։ Հասարակական գիտությունների դասավանդման բարելավմանն անդրադարձավ նաև ՀԿԿ Երևանի քաղկոմը, որը 1951—1952 թթ. լսեց պոլիտեխնիկական, հայկական մանկավարժական և օտար լեզուների ինստիտուտների կուսկազմակերպությունների, ռուսական մանկավարժական ինստիտուտի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնի, պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի կուսբյուրոյի հաշվետվություններն այդ ուղղությամբ և այն բարելավելու նպատակով մշակեց համապատասխան միջոցառումներ[11]։ Նույնպիսի օրինակներ կարելի է բերել նաև ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի գործունեությունից[12]։ Ձեռնարկված կոնկրետ միջոցառումների շնորհիվ բուհերի կուսկազմակերպությունները, ռեկտորատները և հասարակագիտական ամբիոնները նկատելի աշխատանք կատարեցին մարքս-լենինյան տեսության հետագա զարգացման, նրա դասավանդման մակարդակի բարձրացման գործում։ Հասարակագետ դասախոսների և ասպիրանտների գործունեության, հասարակական գիտությունների դասավանդման բարելավման հարցը գտնվում էր Երևանի պետական համալսարանի կուսկոմիտեի և ֆակուլտետային կուսբյուրոների ուշադրության կենտրոնում։ Այսպես, 1951 թ. սեպտեմբերի 17-ին համալսարանի կուսկազմակերպության ընդհանուր ժողովը հասարակագիտական ամբիոնների առջև խնդիր դրեց բարելավել դասախոսությունների և սեմինարների տեսական մակարդակը, ամբիոններում սիստեմատիկաբար քննարկել դասախոսություններ, ապահովել տեսության խոր տիրապետումն ուսանողության կողմից։ Կուսկոմիտեին և ռեկտորատին հանձնարարվեց պարբերաբար լսել հասարակագիտական ամբիոնների վարիչների և ֆակուլտետային կուսբյուրոների, գիտխորհուրդների նախագահների զեկուցումները հասարակագիտական առարկաների դասավանդման բարելավման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, ուսանողների կողմից մարքս-լենինյան տեսության յուրացման մասին[13]։

---

9 «Սովետական Հայաստան», 12. IV. 1953, «ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1955, № 12, էջ 124։

10 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 84, գ. 46, թ. 17։

11 Նույն տեղում, ֆ. 47, ց. 33, գ. 47, թ. 3։

12 Նույն տեղում, ֆ. 88, ց. 17, գ. 4, թ. 126, գ. 23, թ. 4։

13 Նույն տեղում, ֆ. 116, ց. 2, գ. 201, թ. 89—91։

Հասարակագետ դասախոսների համար հաճախակի կազմակերպվում էին տեսական ղեկուցումներ և սեմինարներ։ Անդրադառնալով այդ խնդրին, «Պրավդան» գրում էր, որ 1951 թ. Երևանի պետական համալսարանում, բժշկական և հայկական մանկավարժական ինստիտուտներում գործում են հասարակագետ դասախոսների մշտական սեմինարներ, որոնց շնորհիվ դասախոսական աշխատանքում լայն տեղ է հատկացվել հեղափոխական շարժումների և սովետական ժամանակաշրջանի պատմության պրոբլեմների ուսումնասիրմանը։ «Հայաստանի Կ/բ/Կ Կենտկոմը,— նշում էր «Պրավդան»,— մարքսիզմ-լենինիզմի հիմունքների, քաղաքատնտեսության և փիլիսոփայության դասախոսների համար կանոնավորապես սեմինարներ էր հրավիրում»[14]։ Այդ տարիներին ՀԿԿ Կենտկոմը պարբերաբար կազմակերպում էր հասարակագիտական ամբիոնների դասախոսների խորհրդակցություններ և սեմինարներ, որոնցում քննարկվում էին մարքսիզմ-լենինիզմի, փիլիսոփայության և քաղաքատնտեսության հանգուցային հարցերը, կիրառվում էր տարբեր բուհերի ամբիոնների համատեղ նիստերի հրավիրման պրակտիկան, որի շնորհիվ կատարվող աշխատանքը կոորդինացվում էր, բարձրանում էր դասախոսությունների գաղափարատեսական մակարդակը, էականորեն բարելավվում աշխատանքը ասպիրանտների և ուսանողների հետ։[15]։

Հասարակագետ դասախոսների աշխատանքի կուսակցական հմուտ ղեկավարումը դրական արդյունք էր տալիս։ 1952—1953 թթ. պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 23 կոմունիստներ պրոպագանդիստական, 52-ը՝ ագիտացիոն-մասսայական աշխատանք էին կատարում քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում[16]։ Կուսակազմակերպությունների հետևողական աշխատանքի շնորհիվ պետական համալսարանում, բժշկական, գյուղատնտեսական և հայկական մանկավարժական ինստիտուտներում բարելավվեց հասարակական գիտությունների դասավանդման մակարդակը, որը խթանեց ուսանողների հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը[17]։ Այսպես, պոլիտեխնիկական ինստիտուտում 1951 թ. առաջին կիսամյակում կազմակերպվեց 12 տեսական կոնֆերանս (48 դասախոսություն), որոնց մասնակցեցին 950 ուսանողներ[18]։

Հասարակական գիտությունների դասավանդման որակի բարելավումը, կյանքի հետ նրա կապի ամրապնդումը, որոնք դարձել էին բուհական կուսակազմակերպությունների աշխատանքի կարևորագույն բնագավառներից մեկը, էապես նպաստում էին դասախոսների և ուսանողների հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը, ստացած տեսական գիտելիքները կյանքում հմտորեն կիրառելուն։ 1953 թ. Երևանի Կիրովյան շրջանի բուհերի 10 հազար 780 ուսանողներից 7221-ը ընդգրկված էին հասարակական աշխատանքներում, այդ թվում կուսակցական ընտրովի աշխատանքում՝ 238-ը, կոմերիտական ընտրովի աշխատանքում՝ 1624-ը, ագիտատորներ էին 1155-ը, պրոպագանդիստներ՝ 41-ը[19]։ Դրական աշխատանք էր կատարվում Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում։ 1952 և 1953 թթ. երկու ամսում այստեղ կազմակերպվեց 12 տեսական կոնֆերանս և 34 դասախոսություն՝ ՍՄԿԿ XIX համագումարի, մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունների, ՍՄԿԿ ներքին և արտաքին քաղաքականության հարցերի շուրջ[20]։ Երևանի բժշկական ինստիտուտի հասարակագիտական ամբիոնները ՍՄԿԿ XIX համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան և սեպտեմբերյան (1953 թ.) պլենումների որոշումների լույսի ներքո ակտիվացրին իրենց աշխատանքը, բարձրացավ դա-

14 «Правда», 5. VII. 1951.

15 Նույն տեղում։

16 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 116, ց. 1, գ. 237, թ. 26։

17 Նույն տեղում, ֆ. 47, ց. 33, գ. 47, թ. 4։

18 Նույն տեղում, ֆ. 88, ց. 8—17, գ. 3, թ. 130։

19 Նույն տեղում, թ. 9։

20 Նույն տեղում, գ. 27, թ. 5։

սախոսական աշխատանքի արդյունավետությունը, տեսական ուսուցումը սերտորեն կապվեց կյանքի հետ[21]։ Նշված ուղղությամբ նկատելի աշխատանք էր կատարվում նաև Երևանի Սպանդարյանի շրջանում։ Շրջկոմի կոնֆերանսը 1954 թ. նոյեմբերի 27-ին արձանագրեց, որ վերջին շրջանում «բուհերում կուսակազմակերպություններն ուժեղացրել են աշխատանքը ուսանողության և պրոֆեսորա-դասախոսական կազմի գաղափարական դաստիարակության ուղղությամբ, որոշ չափով բարելավվել է դասախոսությունների և սեմինար պարապմունքների գաղափարական ու տեսական մակարդակը, հատկապես հասարակական գիտությունների գծով, որովհետև ամբիոններն ուժեղացրել են դասախոսությունների նկատմամբ հսկողությունը, ամբիոնների նիստերում հաճախակի քննարկվում են տեսական հարցեր, դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, որը բարձրացնում է դասախոսների պատասխանատվությունը»[22]։ Հասարակական գիտությունների զարգացումը և դրանց դասավանդման բարելավումը մշտապես նպաստում էր կուսակցական-քաղաքական աշխատանքի մակարդակի հետագա բարձրացմանը։ «Հասարակագիտական ամբիոնների աշխատողներն ինչպես իրենց դասախոսություններով, այնպես էլ պրոպագանդիստական աշխատանքով լուրջ օգնություն են ցույց տալիս կուսակցական կոմիտեին՝ կազմակերպելու և անցկացնելու ամբողջ քաղաքական-դաստիարակչական աշխատանքը»,— նշված է համալսարանի կուսակցական կոմիտեի 1955 թ. հունիսի 10-ի հաշվետու զեկուցման մեջ[23]։

Հիշատակված դրական աշխատանքին զուգընթաց հասարակական գիտությունների զարգացման գործում այդ տարիներին առկա էին նաև թերություններ, որոնք կապված էին անհատի պաշտամունքի հետևանքների հետ։ Մարքսիզմ-լենինիզմի տեսությունը լիովին շաղկապված չէր սոցիալիստական շինարարության պրակտիկային, բավարար չափով չէին լուսաբանվում սոցիալիզմի շինարարության և սովետական ժողովրդի հետագա առաջընթացի հարցերը։ Հասարակական գիտությունների զարգացումը, հասարակական-քաղաքական շարժումների գիտական գնահատումը հանրապետությունում որոշակիորեն արգելակվում էին նաև, այսպես կոչված, «միասնական հոսանքի» դեմ տարվող պայքարի պայմաններում։ 1950-ական թվականներին հանրապետությունում «միասնական հոսանքի» դեմ պայքարի անվան տակ հաճախ անհիմն և չափազանցված գնահատականներ էին տրվում մի շարք հասարակագետների արտահայտած կարծիքներին, ժխտվում էին անցյալի հայ հասարակական-քաղաքական և ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչների ծառայությունները։ 1952 թ. նոյեմբերին կազմակերպվեց բանավեճ՝ գնահատելու XVIII դ. վերջի, XIX դ. սկզբի և 50—60-ական թվականների հայ ազատագրական շարժման մեջ հասարակական-քաղաքական հոսանքների, ազգային-ազատագրական շարժումների հարցերը։ Սակայն այնտեղ պատմագետների աշխատություններում եղած մասնակի թերությունները ներկայացվեցին չափազանցված, որը բարենպաստ հող չէր ստեղծում պատմագիտական և հասարակագիտական մտքի անկաշկանդ զարգացման համար։ ՀԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1953 թ.) պլենումը նշեց. «այն հանգամանքը, որ հայ հասարակական մտքի բնագավառում Մ. Նալբանդյանից հետո, ընդհուպ մինչև XX դ. սկիզբը՝ փաստորեն ժխտվում էր դեմոկրատական թևի առկայությունը, օբյեկտիվորեն ջուր էր լցնում դաշնակների ջրաղացին, նպաստում էր այն արատավոր թեզի պրոպագանդմանը, թե 19-րդ դարի վերջերին հայ իրականության մեջ հող չկար մարքսիզմի գաղափարների տարածման համար»[24]։

ՀԿԿ Կենտկոմի Նոյեմբերյան (1953 և 1954 թթ.) պլենումները, Հայաստանի կոմկուսի XVII և XVIII համագումարները վճռական միջոցներ ձեռ-

21 Նույն տեղում, թ. 4։

22 Նույն տեղում, ֆ. 33, ց. 21, գ. 148, թ. 67։

23 Նույն տեղում, ֆ. 116, ց. 1, գ. 370, թ. 13—14։

24 Նույն տեղում, ֆ. 1, ց. 83, գ. 12, թ. 69։

նարկեցին հասարակական գիտությունների հետագա զարգացումն ապահովելու ուղղությամբ։ 1950-ական թվականների կեսերին անհատի պաշտամունքի բացասական հետեանքների հաղթահարմանը զուգընթաց հանրապետության կուսկազմակերպությունները կարևոր աշխատանք կատարեցին, այսպես կոչված, «միասնական հոսանքի» դեմ տարվող պայքարի պայմաններում հասարակագետներին և նրանց աշխատություններին տրված անճիշտ գնահատականները վերանայելու ուղղությամբ, որի շնորհիվ հասարակագիտական մտքի զարգացման համար նոր հորիզոններ բացվեցին։

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում հանրապետությունում գգալի աշխատանք կատարվեց մարքսիզմ-լենինիզմի դասականների երկերի թարգմանության և հրատարակման, հասարակական գիտությունների զարգացման, դրանց դասավանդման բարելավման, անհատի պաշտամունքի հետևանքների հաղթահարման ուղղությամբ, որը զգալիորեն նպաստեց ինչպես հասարակագետ գիտնականների գաղափարական կոփմանը, այնպես էլ գաղափարական ակտիվի դաստիարակմանը։ Հասարակական գիտությունների զարգացումը և դասավանդման բարելավումը, տեսական հարցերի բազմակողմանի ուսումնասիրումն օգնեցին խուսափելու նախկինում հայ ժողովրդի պատմության լուսաբանման դրծում եղած սխալներից, մշակելու գիտական և ճշմարտացի պատմություն ազատագրական շարժումների, Հայկոմկուսի գործունեության, հեղափոխական շարժումների և սոցիալիզմի կառուցման փորձի մասին։

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМПАРТИИ АРМЕНИИ ПО РАЗВИТИЮ ОБЩЕСТВЕННЫХ НАУК (1951—1955)

ОВАНЕС КОЧИНЯН

Резюме

Деятельность Компартии Армении, направленная на развитие общественных наук и улучшение их преподавания, во многом содействовала идейной закалке ученых-обществоведов и воспитанию идеологического актива. В условиях постоянной помощи и руководства парторганизаций ученые-общественники проводили исследования в области марксистско-ленинской философии, экономики, истории партии, разработали и осветили множество актуальных проблем, связанных с социалистическим строительством. Особое внимание было уделено учеными вопросам совершенствования методов преподавания общественных предметов. Существенная работа была проведена по увязыванию теории с практикой, идейному воспитанию и повышению общественно-политической активности студенчества.